ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 19

«03» 04 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 91 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը նույն վարչական շրջանի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու և թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի ավագ մասնագետի 1 թափուր հաստիքը կրճատելու և ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետի 1 հաստիք ավելացնելու ու ՀՀ ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի վարորդի 1 թափուր հաստիքը կրճատելու ու ՀՀ գլխավոր դատախազի օգնականի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի N 54 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N ՛91 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 22-րդ գլխի 83-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 1», իսկ 84-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը՝ «Դատախազության դատախազ 6» բառերով,

2) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 2-րդ գլխի 4-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետ 8» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետ 9», իսկ նույն գլխի «Ընդամենը 9» բառերը՝ «Ընդամենը 10» բառերով,

3) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 2-րդ գլխի 3.3-րդ գլխի «Վարորդ 20» բառերը փոխարինել «Վարորդ 19» բառերով, «**Ընդամենը՝ 31**» բառերը՝ «**Ընդամենը՝ 30**», իսկ նույն գլխի «***Ընդամենը՝ ֆինանսատնտեսական վարչությունում 44***» բառերը՝ «***Ընդամենը՝ ֆինանսատնտեսական վարչությունում 43***» բառերով,

4) 2-րդ հավելվածի 4-րդ բաժնի 51-րդ գլխի 198-րդ կետի «Բաժնի ավագ մասնագետ 2» բառերը փոխարինել «Բաժնի ավագ մասնագետ 1», «Ընդամենը 4» բառերը՝ «Ընդամենը 3», իսկ նույն գլխի «**ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում՝ 6**» բառերը՝ «**ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում՝ 5**» բառերով,

5) 2-րդ հավելվածի «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 56***» բառերը փոխարինել «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 55***» բառերով,

6) 2-րդ հավելվածի 5-րդ բաժնի «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 56***» բառերը փոխարինել «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 55***» բառերով, իսկ «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության դատախազությունում 302***»՝ «***Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության դատախազությունում 301***»,

7) 3-րդ հավելվածի 2-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական 2» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական 3» բառերով, իսկ «**Ընդամենը՝ 12**» բառերը՝ «**Ընդամենը՝ 13**» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի

Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ